



114. ԷՇԻ ՔՈՒՌԱԿԸ

Մի աղքատ մարդ ու կնիկ են ըլում, սրանք բան չեն ունենում:
Մարդը թագավորի նախիրն ա պահում, կնիկն էլ նրանց հաց-
թուխն ա լինում:

Մի օր էլ կնիկը ճաշին հաց ա տանում մարդու համար, ճա-
նապարհին տեսնում ա մի կնիկ՝ երեխան գիրկը գնում ա, մեկն
էլ մի էջի քուռակ առաջին ա գնում:

էս նախրչու կնիկը ասըմ ա.— Աստված, երեխա շունենք,
գոնե մի էս տեսակ էջի քուռակ էլ մեզ տաս, մենք էլ նրանով ուրա-
խանանք:

Հենց էդ ժամանակ հրեշտակը սրան խաչակնքում ա, ու էս
կնիկը մնում ա հղի: Էստեղ էլ մի տասը կոպեկ ա գտնում:

Անցնում ա մի քանի ժամանակ, կինը սլառկում է ու մի իշի
զոզուզ ա բերում:

էդ օրը մարդը սպասում ա, սպասում, ճաշը բերող չի լինում:

Ասըմ ա.— Մի գնամ տեսնեմ ի՞նչ ա պատահել, ինչի՞ կնիկս
հաց չբերեց:

Գալիս ա տեսնում կրնիկը պառկած, ասըմ ա.— էդ ի՞նչ ա
էլել:

Ասըմ ա.— Խտոր եմ ընդել:

Ասըմ ա.— Խտոր ընդնելը ի՞նչ ա:

Ասում ա.— Էրեխա եմ բերել:
 Ասում ա.— Վի՛ր, ինչ լավ բան ես արել:
 ՄԼկ էլ մտիկ ա անում, տեսնում երկար ականջներով մի
 փոքրիկ իշի բուռակ: Մարդը փետը վերցնում ա, ուզում ա սպանի:
 Կնիկը շի թողում, ասում ա.— Ըսենց, ըսենց, աստծուց էս
 ուղեցի՛ էս էլ տվեց:
 Մարդը կնդանը թողում ա գալի տավարի կուշտը:
 Քուռակը ասում ա.— Մայրի՛կ, հայրիկն ո՛ւր գնաց:
 Ասում ա.— Տավարի կուշտը, ա՛ բալա շա՛ն, մի բան էլ չկե-
 րավ, սոված գնաց:
 Ասում ա.— Ա՛մա շան, հացը տուր ես տանեմ:
 ՄԼրը բերում ա երկու լոշ, մի կտոր պանիր:
 Բերում ա հոր մոտ, տեսնում ա հերը քնած ա, հացը դնում ա-
 րթի ասկը, հերը վեր ա կենում, հացը ուտում ա, քուռակը տա-
 վարներին քշում տանում արածացնում ա:
 Հորը ասում ա.— Հայրիկ ջա՛ն, դու գնա տուն, ես կարածաց-
 նեմ, դու իրիկունը արի, որ ամեն մեկը քշենք իրան տիրոջ տուն,
 ես շեմ ճանանչում:
 Իրիկունը իշի քուռակը շրվճացնելով տավարը բերում ա
 տուն, սա էն տեսակ լավ շվճացնում ա, ոնց որ գործիքի վրեն
 նվազի:
 Բազավորի ախշիկը, որ լսում ա սրա շվճոցը, սիրահարվում
 ա դրա էդ նվազի վրա:
 Ամեն Լրեկո դուրս ա դալիս դրան նայում ա ու լսում դրա
 շվճոցը, էդ էշի ղողուղն էլ սիրահարվում ա թագավորի աղջկա
 վրա:
 Օրերի մի օրը մորը ասում ա.— Գնա՛, թագավորի աղջկանը
 ինձ համար ուզի:
 Մերը ասում ա.— Ա՛ բալա, սուս արա, ամոթ ա, թագավորը
 մեղ աղջիկ չի տալ:
 Մի օր էլ իրիկունը տավարը տուն բերելու ժամանակ սա էն
 տեսակ նվազում ա, էն տեսակ նվազում ա, որ ամբողջ թաղը
 դուրս ա դալի, դրա նվազն ա լսում:
 Հարեանները ասում են.— Էս ինչ լավ բան ա՛ երեկ մեկ, էսօր
 էրկու ծնվել ա, էս տեսակ լավ շվճացնում ա ու էդքան տավարն
 էլ մենակ արածացնում ա:
 ՄԼրն էլ ասում ա.— Բա ասիլ չեք, թե էս կլիամենն էլ թա-
 գավորի բխշկա վրա սիրահարվել ա, հորը ասմ ա՛ գնա թագա-
 վորի աղջիկը ուզի ինձ համար:

Թագավորի աղջիկն էլ դրա շվշվոցի վրա ա սիրահարվում,
մարթ ա ղրգում, թե էդ քուռակը բերեք ինձ համար:

Քուռակին տանում են թագավորի պալատը, սա էնքան ա սի-
րահարվում աղջկա վրա, որ էլ պոկ չի գալի դրանից: Թագավորի
աղջիկը, որ իմանում ա, թե քուռակը իրան ուզում ա, ինքն էլ չի
ուզում քուռակին:

Ասում ա.— Տարե՛ք, էլ պետկա չի:

Քուռակին ուղարկում են հոր տուն, սա ամեն օր հորը խընդ-
րում ա, թե զնա թագավորի աղջիկը ուզի ինձ համար:

Հայրը ասում ա.— Ա՛յ բալա, թագավորը լսի՛ գլուխս կկտրի,
էլ այդպիսի բան չասես:

Մյուս օրը նորից է խնդրում.— Հայրիկ ջա՛ն, խնդրում եմ
զնա, խնդրում եմ զնա:

էնքան է խնդրում, որ էլ հայրը չի կարողանում հրաժարվի:

Մյուս օրը վեր է կենում գալի թագավորի մոտ, ասում ա.—
Թագավորը ապրած կենա, եկել եմ քեզ մոտ, որ գլուխս կտրել
տաս:

Ասում ա.— Ինչի՞ համար:

Ասում ա.— Թագավոր ջա՛ն, էսպես, էսպես բան, էն մեռածը
կպել ա ինձ, ասում ա զնա թագավորի աղջիկը ուզի, բեր ինձ հա-
մար:

Թագավորը մտկումը ասում ա, սպասի էսպիսի պայման
անեմ սրա հետ, որ չկարողանա տակիցը դուրս գա:

Ասում ա.— Աղջիկս էն ժամանակ կտամ տղիդ, երբ վեր քու
հարստութիւնը իմիցը երկու անգամ շատ ըլի:

Հերը գալիս ա տուն քուռակին ասում ա.— Ա՛ բալա, թագա-
վորը էն տեսակ պայման դրեց, որ լեզուս կպավ, էլ կարացի վե՛լ
մի բան խոսեմ:

Ասում ա.— Ի՞նչ ասեց:

Ասում ա.— Ասեց, թե՛ աղջիկս էն ժամանակ կտամ, եփ քու
հարստութիւնը երկու անգամ իմիցը շատ ըլի: Բա դա լինելու
բան ա՛, մենք հաց շո՛ւնենք կուշտ ուտենք, պտի երկու անգամ
թագավերիցը հարուստ ըլնենք:

Քուռակը մորը ասում ա.— Մայրի՛կ, էն ժամանակ, որ հայ-
րիկին հաց էիր տանում տասը կոպեկ գտար, էն տասը կոպեկը
ի՞նչ արիր, տուր ինձ:

Մերը տասը կոպեկը տալիս ա աղին, տղեն առնում ա զնրա՛:
Փալիս ա տեսնում էրկու շորան մի ցաքու վեր են հատում:

Ասրմ ա.— Էդ խի՞ Լք տհե վեր հատում:

Ասրմ Լն.— Ըստի մի օձ կա, ուղում ենք սպանենք:

Էն տասը կոպեկը տալիս ա սրանց, ասրմ ա.— Առե՛ք զնացևք, մենակ էլ օձին սպանիլ միք:

Սրանք փողը առնում են ու զնում, օձը դուրս ա գալիս, ասրմ ա.— Որ դու ինձ լավութիւն արիր, մահից ազատեցիր, արի ղնանք Լս էլ քեզ տեմ լավութիւն անիլ:

Ճանապարհին օձին ասրմ ա.— Ես մի բան էլ ա ուզում շեմ, մենակ թաղավորի աղջկան եմ ուզում:

Օձը ասրմ ա.— Էդ հե՛շ, էդ կբերեմ, մենակ, որ զնանք մեր տուն, հայրս կհարցնի կասի՝ ի՞նչ Լս ուղում, դու կասես՝ քո սաղութիւնը, կասի՝ բա իմ սաղութիւնը քեզ ի՞նչ, ուզածդ ուզի, կասես՝ խալիչեն իրա մասալովն եմ ուզում, քու սուփրիցն եմ ուզում, մեկ էլ լեզուդ բերնումս պտտացրու:

Սրանք գալիս Լն հասնում օձի հոր տուն:

Օձի կինը ասրմ ա.— Ընս ես, ջընս ես՝ տուն մտի:

Մանում աւ Ասրմ ա.— Քու ցեղից, քու արյունակիցն եմ:

Ասրմ Լն.— Պահանջիր՝ պահանջդ կկատարենք:

Ասրմ ա.— Իմ պահանջն էն ա, որ ինչ ուզում եմ, նպատակս կատարվի:

Ասրմ ա.— Թող նպատակդ կատարվի:

Ասրմ Լն.— Էլ ասա՛, որ բոլորը թամամ, թամամ լինի:

Ասրմ ա.— Գնա, տերը քեզ հետ, ամեն բանդ թամամ կլինի:

Տղեն դուրս ա գալի դուռը, օձն էլ հետը դուրս ա գալիս, ասրմ ա.— Առ էս խալիչեն, իմ հերը տվեց քեզ, կանգնենք երկսով էլ վրեն, դու Լս ճիպոտով խփի ու ցանկացած տեղդ ուզի, քեզ կտանի կհասցնի մի ժամում, միայն հիմա ուզի էն ցաքու մոտը:

Երկսով էլ կայնում են խալու վրեն, ճիպոտով խփում են, տղեն ասրմ ա.— Օձ ախպե՛ր, սոված եմ:

Օձը ասրմ ա.— Ինչ որ կա քեզ մոտ ա, քու էդ խալիչի մեջը:

Ասրմ ա.— Ի՛նչ վե՛նց բերել տամ:

Ասրմ ա.— Առ էս մատանին, մտցրու մատդ ու ասա՛ ուղում Լմ Լրկու անդամ ավել էն բոլոր բաներիցը, որ թագավորը ունի:

Օձը ասրմ ա.— Դե՛հ նստի խալու վրա ճիպոտով խփի ու ասա՛ ինձ թագավորի կտրին վեր բերի:

Օձը դրան պահ ա տալի ու ասրմ.— Զգո՛ւշ, էդ բաները կորցնես վե՛շ, եթե կորցնես, կգաս էս ցաքու մոտը կասես. «Գողակ ախպեր ջա՛ն, իմ կորցրածն եմ ուզում», ես դուրս կգամ:

Սրանք գալիս են երկուսով թագավորի աղջկանը ուզում:
Թագավորը ասում ա.— Եթե իմ տան պես տուն կունենա, էն վախտը աղջիկս կտամ քեզ:

Տղեն ճիպոտով խփում ա խալուն, ասում ա.— Ուզում եմ, որ էգուց իմ տան տեղը մի էն տեսակ տուն ունենամ, որ թագավորի տունը իմ տան շվաքումը չերևա:

Առավոտը վեր ա կենում տեսնում մի էն տեսակ պալատում ա պառկած, որ էլ ասելու չի՝ ի՞նչ տուն-տեղ, ի՞նչ հարստություն, հերն ու մերը մնում են շմած: Մարդ ու կնիկ ուրախանում են:

Մարդը ասում ա.— Փա՛ռք քեզ աստված ջա՛ն, մատաղ քու սոված քուտակին, քու խտոր ընգնիլուն էլ, ա՛ կնիկ:

Թագավորը վեր ա կենում տեսնում՝ արև չկա, կարծում ա մոլթն ա, ասում ա.— էս ի՞նչ բան ա, դեռ լույսը չի բացվել:

Ասում են.— Ժամի տասներկուսն ա, ո՞նց չի բացվել, մեր տան դիմացը մի էն տեսակ պալատ են շինել, որ էլ ասելու չի, էն պալատի շվաքն է մեր տան վրա ընգած:

Թագավորը ասում ա.— Չէ՛, սրան ոնց որ էրեվում ա, հունար շատ ունի:

Տղեն հորը լավ հագցնում ա ու նորից ուղարկում թագավորի մոտ:

Թագավորը, որ տեսնում ա էս մարդին էդ տեսակ լավ հագած-կապած, տանում ա ներս, հարգանքով նստացնում, կանչում ա վազիրներին, խորհուրդ են անում, ասում ա.— էկեք էն տեսակ պահանջ դնենք, որ չկարողանա անի, գուցե թողնի գնա:

Կանչում ա, ասում ա.— Եթե կարողացար քու պալատիցը մինչև թագավորի պալատը ոսկի կարմունջ շինել տաս, երկու վողմերն էլ լինի վարդ-վարդաստան, էն ժամանակ աղջիկս կտամ քեզ հարս լինի:

Ները գալիս է տուն, ասում ա.— Ա՛յ բալամ, էդ շան որդի անխիղճը էն տեսակ բան ասեց, որ էրազումն էլ չի լինի:

Ասում ա.— Ի՞նչ ասեց:

Ասում ա.— Ըսե՛նց, ըսե՛նց բան, էդ էլ ըսկի ըլնելու բան չի:

Ասում ա.— Հայրիկ ջան, գնա մի մեշոկ կակալ բե, գիշերը պետք ա համ ուտենք, համ էլ կարմունջը շինենք:

Ասում ա.— Ա՛ բալա, ոչ էգբան կակալ կուտվի, ոչ էլ էդ կարմունջը կշինվի:

Տղեն գնում ա մի մեշոկ կակալ ա բերում, էրկուսով նստում են մինչև կես գիշերը ջարդում ուտում, կես գիշերին հոր քունը տանում ա, քնում ա:

Տղեն մատանին պտտացնում ա, ասըմ ա.— Ուզում եմ մի էն տեսակ կարմունջ լինի առավոտը, որ թագավերը իրան կյանքի մեջ ոչ տեսած լինի, ոչ էլ լսած:

Առավոտը թաղավորին խաբար են բերում, թե քո պահանջը կատարված ա:

Տղեն ասըմ ա.— Հայրի՛կ, գնա, տեսնենք էս անգամ ի՞նչ կասի:

Հերը ասըմ ա.— Ա՛րբալա, ղահլես գնաց, թե դու կարող ես՝ մի էն տեսակ բան սարքի, հետը խոսի ու դու ասա, տես ինչ կասի:

Տղեն բան ա սարքում, հետը խոսում ա. ասըմ ա.— Ես իշի քուռակ չեմ, իմ կաշին ա իշի կաշի:

Թաղավորը ասըմ ա.— Կարա՞ս մի էն տեսակ պղինձ սարքել տաս, որ ամբողջ քաղաքը դրա միջի ճաշը ուտի՝ չվերջանա:

Տղեն ասըմ ա.— Էդ պղինձը վաղուց ունեմ:

Թաղավորը ասըմ ա.— Գնա՛նք, տեսնեմ:

Գալիս են տեսնում մի փոքր պղինձ, իրեք քար դրած տակը, էրկու պուճուր բնձղակոթ էլ թըստում ա:

Ասըմ ա.— Էս ա՞ քու պղինձը:

Ասըմ ա.— Հա՛:

Ասըմ ա.— Էս հու մի մարդ ուտի՝ վշտանալ չի:

Թագավերը նեղանում ա, քացով տալի ու ոտը ջարթվում ա, ասըմ ա.— Էս պղինձին տես, մի պատառ զատ ա, ոտս ջարդեց:

Իշի քուռակը վեր ա ունում դնում էն կողմը:

Թաղավորին ասըմ ա.— Դե դու էլ վերցրու՝ տեսնեմ կարա՞ս:

Թաղավերը ուղում ա բռնի, կպնում ա պղինձին, վազիրը գալիս ա, որ պոկի՝ նա էլ ա կպնում, թագավորի աղջիկն ա գալիս, որ հորը աղատի՝ նա էլ ա կպնում:

Աղջիկը տեսնում ա ճար չկա, տգին խնդրում ա, ասըմ ա.— Մեկ աղատի:

Տղեն ասըմ ա.— Վեր ազատեմ, ինձ կառնե՞ս:

Ասըմ ա.— Հա՛, կառնեմ, թե բոլորովին տղա դառնաս:

Տղեն ասըմ ա.— Կանգլո՞ս:

Սրանք նորից պոկ են դալիս, աղջկանը տղայի հետ փսակում են, հարսանիք են անում ու միասին գալիս են իրենց տուն: Տղեն էլ դառնում ա մի էն տեսակ սիրուն գեղեցիկ տղա, որ աղջիկը մնում ա շշմած, աչկերին չի հավատում, թե էս էն իշի քուռակն ա:

Մի քանի վախտիցը եղը տղեն ու աղջիկը գալիս են թագավորին տեսնելու:

Թագավորը աղչկանը ասում ա.— Դու դրա գաղտնիքը իմացի, թե էդքան հարստութիւնը որտեղի՞ց ձեռք բերեց:

Աղչիկը ասում ա.— Հայրի՛կ, նրա ամեն բանը գիտեմ, մենակ մի մատը միշտ փաթաթած ա ըլում, չգիտեմ ի՞նչ բան ա:

Թագավորը ասում ա.— Ուրեմն դրա գաղտնիքը հենց էդ մի մատի միջին ա:

Աղչիկը ուզում ա մատին ձեռը տա, տղեն թողում չի, ասում ա.— Վա՛յ, վա՛յ, վա՛յ մատս ցավացրիր:

Բերում են մեծ սեղան են սարքում, կեր ու խում անում, քեֆ անում, աղչիկը տղին էնքան ա խմացնում, որ տըղեն իրեն կորցնում ա, ընգնում ա, քնում ա: Ախչիկը կամաց մատի վրայի փաթաթանները քանդում ա, տեսնում ա՝ տղայի մատին մի էն տեսակ մատանի կա, որ ոչ ուտես, ոչ խմես, էդ նկարին նայես:

Կամաց մատիցը հանում ա ու դնում իրան մատումը, ասում ա.— Մատանի՛, էս տղեն ինչ ունի, բոլորը բեր էստեղ:

Մեկ էլ տեսնում ա՝ սուփրեն, խալիչեն, ճիպոտը իրար հետեւից էկան, չիմ տանում ա պահում ա: էս աղչիկը հլա շատ վաղուց իմացել էր ուրիշ թագավորի տղի մասին ու սրա ուշկն ու միտքն էն տղեն ա ըլում:

Մատանուն ասում ա.— Ես ուզում եմ ինձ տանես էն թագավորի աղի կուշտը:

Աղչիկը աչկը խփում բացում ա, տեսնում ա էն տղի կոխքին ա, սրանք հարսանիք են անում ու իրանց հմար ապրում են: Խաբարը տանք էն տղիցը:

Սա վեր ա կենում տեսնում էլի իրանց գոմը, էլի էն թոզոտ, մոզոտ աղբատներն են: Սա վազում ա գալիս ա էն օձի կուշտը, ասում ա.— Վա՛յ, ազիզ աղբեր ջան, որտե՞ղ ես:

Օձը գալիս ա, ասում ա.— Ի՞նչ ա էլել:

Ասում ա.— էսե՛նց, էսե՛նց ամեն բան կորցրեցի:

Օձը ասում ա.— Քեզ կտամ մի շուն, մի կատու. կվերցնես, կգնաս ծովի ափը, դու կնստես ափին, նրանք կգնան կբերեն:

Տղեն սրանց բերում ա ծովի ափը, ասում ա.— Ես մի սուփրա, մի խալիչա, մի ճիպոտ ու մի մատանի ունեի, փախցրել են, տաբել են, գնացեք բերեք:

Սրանք գալիս են ծովը դուս գալի, անցնում Չին թագավորի հողը, շունը տապ ա անում, կատուն գալիս ա թագավորի բալկոնը, սրան հաց են տալի պահում: էս քաղաքում կատու չի լինում, կատուն բոլոր մկներին բռնում է, բայց չի ուտում, ասում ա.— Գնացեք բոլորին ասեք թող գան, ժողով է լինելու:

Կրր բոլոր մկները հավաքվում են, ասում ա.— Ծս ձեզ լավութիւն կանեմ, ոչ մեկիդ էլ չեմ վնասի, դուք ի՞նչ կանեք:

Մկները ասում են.— Ի՞նչ ուզես:

Կատուն ասում ա.— Ուզում եմ էս տեղի թագավորի հարսի մատանին, խալին, սուփրեն, ճիւղտը:

Մկները էդ բոլոր բաները բերում են, տալի կատվին:

Կատուն վերցնում ա բերում շան մոտ, միասին բերում են, մատանին էլ շան բերանումն է լինում, որ ոչ ոք չխլի, մեկ էլ հանկարծ շունը մի ձուկ է տեսնում, հափ է անում, ուզում է ձուկը բռնի, էդ պահին մատանին բերնից ընկնում է ծովի տակը: Մի ձուկը էդ մատանին կուլ ա տալի: Կատուն էստեղ էնքան է սպասում մինչև որ ձուկ բռնողները էս ձկանը որսում են: Կատուն սրանց հետևում է մինչև էդ ձուկը փախցնում է, բերում: Բոլոր բաները բերում են տալիս աղային:

Տղան մատանին մտցնում է մատը ու ասում ա.— Սուփրա՛, մի լավ ճոխ սեղան բաց, ուտենք կշտանանք:

Սրանք ուտում, խմում, կշտանում են: Տղան մատանին պտտացնում ա, ասում ա.— Թող հերն ու մերս ճոխ սեղան, ճոխ ապրուստ ունենան:

Մեկ էլ պտտացնում ա, ասում ա.— Մատանի՛, ուղըմ եմ էն տղեն ու իմ կնիկը էստեղ լինեն:

Տղան սրանց վերցնում բերում ա թագավորի մոտը, ասում ա.

— Թագավորը ապրած կենա, երբ քու աղջիկը էդպիսին էր, ինչո՞ւ կնության տվիր:

Թագավորը ասում ա.— Ինչ ես ասում, ա՛յ բալա, իմ աղջիկը էդպիսին չի:

Տղան բերում ցուլց ա տալիս: Թագավորը տեսնում ա, որ դրանք էնպես փաթաթված են իրար, իսկույն կրակ է տալիս իրան աղջկանը սպանում:

Ասում ա.— Տղա ջա՛ն, էս անծանոթ տղային նորից ուղարկի իրեն հոր տունը: Տղան մատանին մեկ պտտում է, սրան նորից ուղարկում է իր հոր տուն:

էս տղան, որ իր հոր տանը հանկարծ արթնանում է, ուժեղ գոռում է: Ծնողները ասում են.— էդ ի՞նչ պատահեց:

Ասում ա.— Հայրի՛կ, իմ սիրածին էն ո՞վ կրակ տվեց:

Հերը ասում ա.— Բալա՛, նա հրեղեն էր ինքն էկել էր, ինքն էլ գնաց:

էն թագավորը նոր էստեղ հարսանիք է անում, իր փոքր աղ-

շիկը էդ տղայի հետ պսակում, յոթ օր, յոթ գիշեր ուտում, խմում.
քեֆ են անում: Նրանք հասնում են իրանց մուրազին, դուք էլ ձեր
մուրազին:

Ասուց ընկավ երեք խնձոր, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին,
մեկն էլ՝ անկաջ դնողներին: Կարող ա պատահի, էդ մարդիկ կըն-
վեն, խնձորների մեջ մեծ ու փոքր վլինի: Խնձորները նորից կբա-
ժանեմ. մեկը՝ շատ խոսողին, մեկը՝ պատմություն պատմողին,
մեկն էլ ինձ:

Վազով էկան մուկն ու կատուն,

Ամեն մարդ իրանց տուն,

Ով չգնա իրանց տուն,

Մուկն ընգնի իրանց թթուն:

Ձեզ տուն կա,

Մեզ էլ քուն գա:

Աման շաման,

Տաշտ ու մաղ,

Սուփրա սեղան,

Կլեկեմ իմ քրեղան,

Հայերից վնասվող չլինի,

Թշնամուց էլ մնացող չլինի:

